

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՉԱՎԱՐՏՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ
ՍԿՋԲՈՒՆՔԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

Միսակ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ուսումնական ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ոստիկանության կապիտան

Պատիժը պետական հարկադրանքի միջոցներից ամենախիստն է, և դրա նշանակումը առանցքային տեղ է զբաղեցնում արդարադատության իրականացման մեջ¹: Պատիժ նշանակելիս պետք է անշեղորեն պահպանվեն քրեական օրենսդրության սկզբունքները և մասնավորապես արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը: Ինչպես իրավացիորեն նշվում է զրականության մեջ, նույնիսկ դատական ճիշտ որոշումը կորցնում է իր դաստիարակչական նշանակությունը, եթե այն չի ընկալվում արդարացի²:

ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետև՝ քր.օր.) 10-րդ հոդվածում ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը հռչակում է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Այդ սկզբունքին համահունչ՝ քր.օր.-ի 61-րդ հոդվածի

1-ին մասը սահմանում է. «Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները»:

Քր.օր.-ի Ընդհանուր մասի այդպիսի դրույթներից է 65-րդ հոդվածում ամրագրված նորմը, որը կարգավորում է պատիժ նշանակելը չավարտված հանցագործության համար: Հոդված 65-ի 1-ին մասի համաձայն՝ «Չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելիս հաշվի են առնվում հանցավորի կատարած գործողությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այն հանգամանքները, որոնց հետևանքով հանցագործությունը ավարտին չի հասցվել»: Դրա հետ մեկտեղ՝ քր.օր.-ի 65-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը սահմանում են, որ հանցագործության նախապատրաստության համար ազատագրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել քր. օր.-ի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատագրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կետը, իսկ հանցափորձի համար՝ երեք քառորդը: Չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելիս արդարության սկզբունքի իրագործման ապահովմանն էր ուղղված «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 23.05.2011թ. օրենքով քր.օր.-ի 65-րդ

հողվածը 4.1 կետով լրացնելը, ըստ որի՝ հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս վերոնշյալ կանոնները չեն կիրառվում:

Ինչպես տեսնում ենք, քր.օր.-ը դատարանի վրա դնում է չավարտված հանցագործության համար ազատազրկման ձևով նշանակվող պատժի պարտադիր մեղմացման պարտականություն: Նախկին քրեական օրենսդրությունը միայն ընդհանուր բնույթի դրույթներ էր սահմանում չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու վերաբերյալ, և հանցագործության նախապատրաստության ու հանցափորձի համար նշանակվող պատժի մեղմացումը դատարանի իրավունքն էր: Այսպես, 1961թ. քր.օր.-ի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանցագործության նախապատրաստության համար և հանցափորձ կատարելու համար պատիժ է նշանակվում տվյալ հանցագործության վերաբերյալ պատասխանատվություն նախատեսող օրենքով: Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի կատարած գործողությունների բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանն ու այն պատճառները, որոնց հետևանքով հանցագործությունը մինչև վերջ չի հասցվել»: Այդպիսի ընդհանուր բնույթի դրույթներ են սահմանված նաև Բելառուսի Հանրապետության գործող քր.օր.-ի 67 հոդվածի 1-ին մասում. «Չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելիս հաշվի է առնվում մեղավորի կատարած գործողությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այն հանգամանքները, որոնց ուժով հանցագործությունն ավարտին չի հասցվել»: Նմանապես՝ Ուկրաինայի քր.օր.-ի 68 հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելիս դատարանը, ղեկավարվելով սույն օրենսգրքի 65-67 հոդ-

վածներով, հաշվի է առնում անձի կատարած արարքի ծանրության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և պատճառները, որոնց հետևանքով հանցանքը ավարտին չի հասցվել»³:

Կարծում ենք, որ ավելի արդարացի է 2003թ. ՀՀ քր.օր.-ով տրված այն լուծումը, որ չավարտված հանցագործության համար ազատազրկման ձևով նշանակվող պատիժը պետք է պարտադիր մեղմացվի ավարտված հանցագործության համար սահմանված պատժի համեմատ: Հարցի մնանատիպ լուծում է տրված նաև Ռուսաստանի Դաշնության քր.օր.-ի 66 հոդվածում, Ղազախստանի Հանրապետության քր.օր.-ի 56 հոդվածում: Իսպանիայի քր.օր.-ի 62 հոդվածը սահմանում է, որ հանցափորձի համար նշանակվում է ավարտված հանցագործության համար նախատեսված պատժից մեկ կամ երկու աստիճան ցածր պատիժ⁴:

Սկզբունքորեն ընդունելով օրենսդրի այն մոտեցումը, որ հանցագործության նախապատրաստության և հանցափորձի համար նշանակվող պատիժը պետք է ավելի մեղմ լինի, քան ավարտված հանցագործության համար նշանակվող պատիժը, միաժամանակ գտնում ենք, որ քր.օր.-ի 65 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում սահմանված՝ չավարտված հանցագործության համար նշանակվող պատժի մեղմացման կարգը խոչընդոտում է արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի լիարժեք իրագործումը՝ բացասաբար անդրադառնալով նաև քրեական օրենսդրության խնդիրների իրացման վրա: Բանն այն է, որ քր.օր.-ի 65-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, չավարտված հանցագործության համար ազատազրկման ձևով նշանակվող պատժի ձևայնացված սահմանների մասին կանոններ բովանդակելով, կարող են հանգեցնել հարաբերական-որոշակի սանկցիաները բացարձակ-որոշակի սանկցիաների ձևափոխման՝ բացառելով արդարության

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

սկզբունքի իրագործման հնարավորությունը:

Այսպես, օրենսդիրը մեղմացրել է չավարտված հանցագործության համար նշանակվող ազատազրկման ձևով պատժի միայն առավելագույն ժամկետը, իսկ պատժի նվազագույն ժամկետի մասին 65-րդ հոդվածում ոչինչ նշված չէ: Որպես հետևանք՝ դա հանգեցնում է քր.օր.-ի 65-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված դրույթների և Հատուկ մասի որոշ սանկցիաների միջև անհամապատասխանության: Բանն այն է, որ Հատուկ մասի որոշ հոդվածների սանկցիաներում ազատազրկման առավելագույն ժամկետի կեսը կամ երեք քառորդը կազմում են ավելի փոքր ժամկետ, քան այդ սանկցիաներով նախատեսված նվազագույն սահմանը, կամ հավասար են դրան:

Ասվածը պատկերավոր ներկայացնելու համար բերենք հետևյալ օրինակը: Ենթադրենք, անձը կատարել է պետական գործչի սպանության նախապատրաստություն: Քր.օր.-ի 305-րդ հոդվածով այդ հանցագործության համար նախատեսված է 12-20 տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում: Նախապատրաստության համար ցմահ ազատազրկում չի նշանակվում (քր.օր.-ի 65-րդ հոդվածի 4-րդ մաս), և ստեղծվում է այնպիսի իրադրություն, որում անձի նկատմամբ նշանակվող ազատազրկումը, ելնելով 305-րդ հոդվածի սանկցիայի նվազագույն սահմանից, պետք է լինի 12 տարի կամ ավելի, իսկ ելնելով քր.օր.-ի 65-րդ հոդվածի 2-րդ մասից՝ չգերազանցի 20 տարվա կեսը, այսինքն՝ 10 տարին: Տվյալ դեպքում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու վերաբերյալ դրույթները չեն կարող հիմք հանդիսանալ 12 տարուց պակաս ժամկետով ազատազրկում նշանակելու համար, քանի որ հանցագործությունը հանցավորի կամքից անկախ հանգամանքներով ավարտին

չհասցնելը չի կարող գնահատվել որպես բացառիկ հանգամանք և հիմք ծառայել քր.օր.-ի 64-րդ հոդվածի կիրառման համար: Քր.օր.-ի 65-րդ հոդվածի դրույթները սահմանելով՝ օրենսդիրն արդեն իսկ մեղմացրել է չավարտված հանցագործության համար նշանակվող պատիժը:

Հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով նշանակվող պատժի նվազագույն սահմանը 65-րդ հոդվածում չսահմանելու հետևանքով 65-րդ հոդվածի և 305-րդ հոդվածի սանկցիայի միջև առաջացած անհամապատասխանությունը պետք է լուծվի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի հիման վրա: Այսպես, նշված հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Նույն իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասության դեպքում գործում են ընդհանուր մասի դրույթները», իսկ նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը: Նշված դրույթների ուժով պետք է կիրառվի 65-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը, և անձի նկատմամբ նշանակվող ազատազրկման ժամկետը չի կարող գերազանցել 10 տարին: Սակայն, միևնույնն է, բաց է մնում այն հարցը, թե որքան պետք է լինի նշանակվող պատժի նվազագույն սահմանը:

Տեսականորեն այդ հարցին կարելի է տալ երկու պատասխան՝

1) Պատժի նվազագույն սահմանը հենց 10 տարին է, և դրանից մեղմ պատիժ նշանակվել չի կարող, քանի որ պատժի նվազագույն սահմանը 305-րդ հոդվածով նախատեսվածից առանց այդ էլ իջեցվել է 2 տարով: Հարցի նման լուծումը հակասում է արդարության և պատասխանատվության

անհատականացման սկզբունքի պահանջներին, քանի որ նման պարագայում պետական գործչի սպանության նախապատրաստության բոլոր դեպքերը պետք է պատժվեն միատեսակ՝ 10 տարի ժամկետով ազատազրկմամբ, ինչը դատարանին զրկում է պատասխանատվությունն անհատականացնելու հնարավորությունից: Այս առումով համաձայն չենք ՌԴ Գերագույն դատարանի պլենումի «Դատարանների կողմից քրեական պատժի նշանակման պրակտիկայի մասին» 1999թ. հունիսի 11-ի N 40 որոշման 9-րդ կետում նշված այն դրույթի հետ, համաձայն որի՝ «Հանցագործության նախապատրաստության և հանցափորձի համար պատիժ նշանակելով՝ դատարանը պետք է ղեկավարվի չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու օրենքով սահմանված դրույթներով՝ ի նկատի ունենալով, որ դրանք կիրառվում են նաև այն դեպքում, երբ պատժի հաշվարկված ժամկետն ավելի փոքր կլինի, քան քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայի նվազագույն սահմանը»⁶:

2) Պատժի նվազագույն սահմանը 3 ամիսն է, քանի որ քր.օր.-ի 65-րդ հոդվածը նախապատրաստության համար նշանակվող ազատազրկման ձևով պատժի նվազագույն ժամկետի հարցը չի կարգավորել, ուստի որպես նվազագույն սահման պետք է ընդունվի քր.օր.-ի 59-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված որոշակի ժամկետով ազատազրկում պատժատեսակի նվազագույն սահմանը: Սակայն նման մոտեցումն էլ հղի է չափազանց մեղմ պատիժ նշանակելու վտանգով, քանի որ 3 ամսից 10 տարի ժամկետով ազատազրկում նշանակելու օրենսդրորեն թույլատրված հնարավորությունը խիստ ընդլայնում է դատական հայեցողության սահմանները: Անվիճելի է, որ պետական գործչի սպանության նախապատրաստություն կատարած անձի նկատմամբ 3 ամիս ժամկետով ազատազրկում նշանակելու թեկուզ ձևական օրենսդրական հնարավորությունը, մեղմ ասած, չի

բխում արդարության սկզբունքի պահանջներից:

Քր.օր.-ի 305-րդ հոդվածը միակը չէ, որի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով պատժի նվազագույն ժամկետը ավելի մեծ է, քան տվյալ հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի համար նշանակվող պատժի առավելագույն սահմանը: Այսպես, քր.օր.-ի 65-րդ հոդվածի 2-րդ մասի հետ նմանատիպ անհամապատասխանություն ունեն, օրինակ, քր.օր.-ի 131-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիան (7-10 տարի ժամկետով ազատազրկում), 132-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան (7-12 տարի ժամկետով ազատազրկում), 104-րդ հոդվածի 1-ին մասի և 138-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիաները (8-15 տարի ժամկետով ազատազրկում): Քր.օր.-ի 65-րդ հոդվածի 3-րդ մասի հետ նմանատիպ անհամապատասխանության մեջ է գտնվում, օրինակ, քր.օր.-ի 132.2-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիան (12-15 տարի ժամկետով ազատազրկում):

Պետք է նշել, որ արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքին չեն համապատասխանում նաև այն դեպքերը, երբ Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում ազատազրկման առավելագույն ժամկետի կեսը կամ երեք քառորդը կազմում է այդ սանկցիաներով նախատեսված ազատազրկման նվազագույն ժամկետին հավասար ժամկետ: Այսպես, օրենսդրական ներկայիս կարգավորման պարագայում քր.օր.-ի 138-րդ հոդվածի 1-ն մասով նախատեսված հանցագործության (բռնաբարություն) նախապատրաստության բոլոր դեպքերը պետք է պատժվեն 3 տարի ժամկետով ազատազրկմամբ, քանի որ 138-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված ազատազրկման և՛ նվազագույն ժամկետը, և՛ առավելագույն ժամկետի կեսը 3 տարի է: Ստացվում է, որ քր.օր.-ի 138-րդ հոդվածի 1-ն մասով նախատեսված հանցագործության նախապատրաստության համար օրենսդիրը նախատեսել է բացարձակ-որո-

ՔՐԵԱԿԱԼ ԻՐԱՎՈՒՆՔ

շակի սանկցիա՝ դատարանին զրկելով պատասխանատվությունն անհատակա-նացնելու հնարավորությունից:

Չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելիս արդարության և պատասխանատվության անհատակա-նացման սկզբունքի լիարժեք իրագործումն ապահովելու համար անհրաժեշտ է օրենսդրական փոփոխության միջոցով կատարելագործել քր.օր.-ի 65-րդ հոդվածի դրույթները: Քր.օր.-ի Հատուկ մասի սանկցիաներում փոփոխություն կատարելը ճիշտ չի լինի, քանի որ դրանք կառուցվել են արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատման հիման վրա, հետևաբար խնդիրը պետք է լուծել ոչ թե Հատուկ մասի սանկցիաների նվազագույն և առավելագույն սահմանների համաչափությունը քր.օր.-ի 65-րդ հոդվածին հարմարեցնելու, այլ 65-րդ հոդվածի դրույթները կատարելագործելու միջոցով: Մասնավորապես, անհրաժեշտ է քր.օր.-ի 65-րդ հոդվածով կարգավորել չավարտված հանցագործության համար նշանակվող պատժի ոչ միայն առավելագույն, այլև նվազագույն սահմանի հարցը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք քր.օր.-ի 65-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը և չի կարող պակաս լինել տվյալ հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի նվազագույն ժամկետի կեսից»: Իսկ հոդվածի 3-րդ մասը առաջարկում ենք շարադրել հետևյալ կերպ.

«Հանցափորձի համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը և չի կարող պակաս լինել տվյալ հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի նվազագույն ժամկետի երեք քառորդից»:

Եթե քր.օր.-ի Հատուկ մասի հոդվածի սանկցիայի՝ որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի նվազագույն ժամկետի կեսը կամ երեք քառորդը կազմում է ավելի փոքր ժամկետ, քան 3 ամիսն է, ապա այդ դեպքերում նախապատրաստության և հանցափորձի համար նշանակվող ազատազրկման նվազագույն ժամկետը, ելնելով քր.օր.-ի 59-րդ հոդվածի 2-րդ մասից, պետք է լինի 3 ամիս: Ուստի քր.օր.-ի 65-րդ հոդվածը առաջարկում ենք լրացնել 3.1 մասով հետևյալ բովանդակությամբ. «Հանցագործության նախապատրաստության և հանցափորձի համար նշանակվող ազատազրկման ձևով պատժի նվազագույն ժամկետը չի կարող երեք ամսից պակաս լինել»:

Այսպիսով, ելնելով կատարված ուսումնասիրության արդյունքներից, առաջարկում ենք քր.օր.-ի 65-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 65. Պատիժ նշանակելը չավարտված հանցագործության համար

1. Չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելիս հաշվի են առնվում հանցավորի կատարած գործողությունների բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը և այն հանգամանքները, որոնց հետևանքով հանցագործությունը ավարտին չի հասցվել:

2. Հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով

պատժի ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կետը և չի կարող պակաս լինել տվյալ հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի նվազագույն ժամկետի կեսից:

3. Հանցափորձի համար ազատազրկման ձևով պատժի ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի երեք քառորդը և չի կարող պակաս լինել տվյալ հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի նվազագույն ժամկետի երեք քառորդից:

3.1. Հանցագործության նախապատրաստության և հանցափորձի համար նշանակվող ազատազրկման ձևով պատժի նվազագույն ժամկետը չի կարող պակաս լինել երեք ամսից:

4. Հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի համար ցմահ ազատազրկում չի նշանակվում:

4.1. Սույն հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված կանոնները չեն կիրառվում հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս»:

Կարծում ենք, որ նման օրենսդրական կարգավորումը, բացառելով չավարտված հանցագործության համար նշանակվող պատժի ձևայնացված սահմանները, կնպաստի արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի լիարժեք իրագործմանը:

¹ St'u Волков Б.С. Нравственные начала в назначении наказания//Правоведение, - 2000. N 1, էջ122:

² St'u Эскимов А.И. Справедливость и социалистическое право, Л., ЛГУ, 1980, էջ 111:

³ Ուկրաինայի քր.օր.-ի 65-67-րդ հոդվածներով սահմանված են պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

⁴ St'u Уголовный кодекс Испании/Под ред. и с предисловием Н.Ф.Кузнецовой, Ф.М.Решетникова. М., Зерцало, 1998, էջ 28:

⁵ St'u Постановление Пленума Верховного суда российской федерации от 11 июня 1999г. N 40 „О практике назначения судами уголовного наказания,,,

Քրեական իրավունք**SPECIFYING PUNISHMENT FOR AN INCOMPLETE CRIME
IN THE LIGHT OF JUSTICE PRINCIPLE****Misak MARKOSYAN**

*Assistant Teacher, Chair of Criminal Law and
Criminology, Academy of RA Police Educational
Complex, PhD, Police Captain*

The article is devoted to affairs connected with specifying punishment for an incomplete crime.

While specifying punishment for an incomplete crime the Court, proceeding from the Justice and Responsibility personalization principle, the character and the degree of danger for the public of the acts done by the criminal and the circumstances

because of which the crime wasn't completed must be taken into consideration.

In the result of analysis of Criminal-Juridical norms, regulating specification of the punishment for an incomplete crime, the author comes to conclusion that the rule set by the Legislation for specifying punishment for preparing the crime and attempt to commit a crime doesn't fully let realization of the principle of the Justice.

In the final part of the article the author presents a concrete legislative proposal concerning the specifying punishment for an incomplete crime, the realization of which will let provide a realization of the Justice principle while specifying punishment for preparing the crime and attempt to commit a crime.